Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Բայազետ, «Առերեսում - Անի» հրատ., Ե., 1998, 128 էջ:

Մեծ Հայքի յուրօրինակ բնակավայր է եղել Բայազետը, որը 1826 - 1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ լրիվ հայաթափվել է, իսկ նրա բնակիչները, մահմեդական Հալածանքներից հոգնած, հանգրվանել են մայր Հայրենիքի մի այլ հատվածում Գեղամա լճի ափին՝ ապրելու հույսին ապավինած: Դժվար է եղել տեղահանվելը, նույնքան տառապագին՝ նոր վայրերում բնավորվելը, սակայն որոշման հիմքը ամուր էր՝ հողը պապենական էր, համոզված էին՝ այլևս չէին կոտորվելու այրուդավաններից:

Հին ու Նոր Բայազետների պատմությանն է նվիրված Հենրիկ Աբրահամյանի գիրքը: Հեղինակը երկար է աշխատել գրքի վրա, ջանադրաբար հավաքել է համապատասխան պատմական նյութեր, համադրել դրանք, դասգասել և ստեղծել մի ուշագրավ զատմություն:

Մեզանում առանձին տեղանուններին, աշխարհագրական ու պատմական վայրերին նվիրված աշխատությունների ավանդույթ կա: Բավական է հիշել Ղևոնդ Ալիշանի մի շարք ստվարածավալ հատորները՝ նվիրված Հայաստանի նահանգներին, նրանց նշանավոր մարդկանց, աշխարհագրական առանձնահատկություններին, պատմական դեմքերին և ինքնատիպ բոլոր երևույթներին:

Հենրիկ Աբրահամյանն այս գիրքը գրել է և՛ ճանաչողական, և՛ դաստիարակչական, և՛ հրապարակախոսական նպատակներով: Գրքի բնաբանն է հայ միջնադարյան գրականության նշանավոր դեմքերից մեկի՝ XI - XIդդ. նշանավոր մատենագիր և գիտնական Հովհաննես Սարկավագի բանաձևումը՝ «Անցյալը... ուսումնասիրելով մենք ըմբռնում ենք ապագան»: Գիրքն սկսվում է Գոյի մասին հեղինակի խորհրդածություններով, որ հավաստում են, թե որքան կարևոր է ազգային մեծությունների, հայրենի երախտավորների հիշատակի պահպանումը: Ահա նրանց հետմահու անմահանալու անհրաժեշտության պարտքի զգացումով հեղինակը բարձրացնում է մի անուն՝ Բարսեղ Արծրունի, մեծ հայրենասեր, եռանդուն գործիչ, որի տապանաքարը գտնվում է Սևանի եկեղեցու բակում: Տապանաքարի մակագրության մեջ իշխան Բարսեղ Արծրունին իր հայրենանվեր և ազգօգուտ գործունեության համար բաղդատվում է Ավարայրի նահատակ Վարդան Մամիկոնյանի հետ: Նա ծնվել է 1805-ին և վախճանվել է 1875-ին: Բարսեղ Արծրունու մասին ջերմորեն խոսել է Խաչատուր Աբովյանը, որն իրեն ժամանակակից նշանավոր մարդկանց գործերն անմահացրել է «Վերք Հայաստանի» վեպում, «Մեր թողանք էն մեր հոյակապ իշխանքը՝ Բարսեղ, Մանուկ, Մկրտիչ սղեքն բայազդցի, աշխարհահռչակ տունն Տիգրանյան Ղարսցի...: Էսօր էլ նրանց անունը տալիս՝ բայազեդցիք ու ղարսցիք ուզում են երեսներին խաչ հանեն, էնքան անթիվ են նրանց հերությունն ու լավությունը աղգի վրա» (6):

Հենրիկ Աբրահամյանը գրել է փաստահարուստ մի գիրք՝ չնչելով իր քաղածո վկայությունների հիմքերը: Գիրքը հիմնականում ընդգրկում է XIXդ. անցքեր, սակայն վերջին հատվածները մոտենում են մեր օրերին և ամբողջովին վերաբերում են Նոր Բայազետին՝ վերածնված Բայազետին: Հին Բայազետն* աչքի է ընկել իր անառիկ բերդով, որն ըստ գերմանացի ճանապարհորդ Վագների, «Հանդուգն և հրաշակերտ մի շինվածք է՝ այնպիսի տեղերի վրա հաստատված, որ բազեներն ու անգղները հաղիվ թե համարձակվեն բուն դնել» (14): XIXդ. սկզբին Հին Բայազետն ուներ 1735 տուն և շուրջ 12000 հայ բնակիչներ, իսկ մահմեդականներն ունեին այնտեղ ապրող 310 ընտանիքներ: Մահմեդական գերիշխանությունը իր հետամնաց մեթոդներով փորձում էր խլացնել հայերի ազգային զգացմունքները, ազատասիրական ձգտումները, սակայն հերոս և ըմբոստ բայազետցիները հույսեր էին կապում Ռուսաստանի հետ: Հեղինակը քննում է XIX դարասկզբի և 1826 - 1828թթ. հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների խնդիրները՝ նկատելով ճեղքվածք հայերի՝ դեպի ռուսներն ունեցած անձնվիրության և ռուսական պետական քաղաքականության միջև: Սակայն Աբրահամյանի կարծիքով, թեպետ մեծ էին հին բայազետցիների զոհողությունները, կորուստները, բայց

և այնպես, ռուսական կողմնորոշումը փրկություն էր լիովին բնաջնջվելուց և հնարավորություն՝ Հայաստանի՝ Ռուսաստանին միացած հատվածում վերածնվելու համար: Գրքի էջերում, ինչպես մտապատկերում, սահում են ճանապարհորդների ուղավորությունները՝ Հին ու Նոր Բայազետներից, որոնց գումարվում են բնաջխարհիկ մարդկանց թողած հուշերը: Հեղինակը լայնահայաց է նայում Բայազետի պատմական ճակատագրին, այն չի տարանջատում հայ ժողովրդի ընդհանուր տարաբախտությունից՝ և այս հարցում նա հետևում է Իսաչատուր Աբովյանին, որի նկատմամբ ունի առանձնակի հիացական դիրքորոշում:

Երիցս իրավացի է Հենրիկ Աբրահամյանը, երբ Իսաչատուր Աբովյանի առիթով նկատում է.«Մեղանից շատերը հավանաբար, Իսաչատուր Աբովյանին ավելի շատ են սիրում, քան նրա գրական հերոսներին: Նրա կյանքն ավելի ռոմանտիկ է, շատ ավելի երկնային, անհայտության լուսապսակով պարուրված» (71): Իսաչատուր Աբովյանը դեռևս 1847 թ. Նոր Բայազետի համար գուշակում էր «...ամենաերջանիկ մի ապագա, որ շատերին դեռևս անհայտ է, բայց որ շատերի համար նախանձելի կարող է լինել»: Աբովյանը մշտապես իր մտածումների մեջ էր պահում ողջ հայ ժողովրդին և հայերին դիտում էր միայն իրենց միասնության մեջ՝ նրա համար թանկ էր ամեն մի հայի հակատագիրը: Այս մտահոգությանն է որդեգրվել Հենրիկ Աբրահամյանը. նրա գիրքը Բայազետի մասին է, սակայն նրանում առկա է սթափ մոտեցում ողջ հայության հակատագրի նկատմամբ՝ պատմականության ու արդիականության փոխկապակցված հշգրիտ նպրահանգումներով:

Հայ-ռուսական պատմաքաղաքական հարաբերություններում ընդգրկված էին ռուս, հայ, վրացի նշանավոր զորավարներ, դրողներ, բարձրաստիճան հոգևորականներ: Չի մոռացվում նույնիսկ քուրդ ցեղապետ Մահմեդ բեկը, որը հայերին ծածուկ հայտնում է թուրքերի ստոր ծրագրերի մասին և իր անունը հավերժորեն գրանցում հայ ժողովրդի բարեկամների ցուցակում: Գրքում ուշադրավ ձևով պատկերված են հայերի և Երևանի բերդը աղատագրող ռուս զորահրամանատար Պասկևիչի փոխհարաբերությունները, որոնք երբեմն պղտորվում են Պասկևիչի մանրախնդիր ու սնապարծ նկրտումների հետևանքով:

Հետաքրքրությամբ են կարդացվում Ալեքսանդր Գրիբոյեդովի և հայերի ճակատագրի փոխկապակցությանն առնչվող հատվածները: Գրիբոյեդովի և նրա մանկամարդ կնոջ՝ իշխան Ճավճավաձեի դստեր՝ Նինա Ճավճավաձեի ամուսնության մանրամասները, հայազգի իշխանուհի Ավսերդովայի և Նինա Ճանճավաձեի մտերմության հանգամանքները պատկերված են շատ տեսանելի: Գրիբոյեդովի երիտասարդ կինը ամուսնու եղերական մահից հետո չի կարողանում մոռանալ նրան, վշտահար ապրում է մինչև 1857թ. և թաղվում ամուսնու կողքին:

Գրքի երկրորդ մասն ամբողջությամբ նվիրված է Գեղամա լեռների գեղեցկուհու՝ Սևանի ափերին ծվարած Նոր Բայազետին: Թվարկվում են այն անձինք, որոնք այցելել են Գեղամա լիճ, հիացել նրա բացառիկ գեղեցկությամբ, նրան նվիրել ներբողական տողեր, պատկերել կտավի վրա: Գեղամա լեռներին բանաստեղծություններ են ձոնել Նիկոլայ Տիխոնովը և լենինդրաղցի երիտասարդ բանաստեղծ Վոլֆ Էռլիխը: 1921թ. Ալեքսանդր Մյասնիկյանի որոշմամբ սեծովյան նավապետ Երվանդ Գասպարյանի ջանքերով Սևանա լիճը դառնում է նավարկելի և առափնյա 20 գյուղերի մեջ ապահովում է երթևեկությունը: Սևանա լիճը իր գեղեցկությամբ դյութել է շատերին. «Կապիտան Գասպարյանի՝ Սևանի նկատմամբ սերը փոխանցվեց Մաքսիմ Գորկուն, Անատոլի Լունաչարսկուն, Նիկոլայ Տիխոնովին, Միխայիլ Կոլցովին, շատ շատերին: Նա դարձավ նրանց լավ բարեկամը, ինչպես որ բարեկամ էր Սարգիս Լուկաշինի ու Աղասի Խանջյանի, Արամայիս Երզնկյանի ու Աշոտ Հովհաննիսյանի» (128): «Բայազետ» գիրքը ներծծված է հայրենի բնության նկատմամբ հեղինակի անսահման սիրով: Գրքում կա մի լուսավոր երազանք՝ Նոր Բայազետը տեսնել հայ ժողովրդի հարատևող կյանքի հավերժության մեջ:

Ա.Գ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր